

Վ. ԶԱՊԿԻՆԱ ՅԵՎ Ա. ԳԼԱԶՈՎ




ԿԻՆՈՒԼԻՆ

ՊԵՏԶՐԱՍ









Մոսկվայի կենդանաբանական այգում Մանկա մայր  
առյուծը մի փոքրիկ առյուծիկ ծնեց: Մանկան չուզեց  
նրան կերակրել և լես առյուծիկին տարա մեր տուն:

Առյուծիկն այնքան փոքրիկ էր, վոր ազատ տեղա-  
փոքվում էր ափիս վրա: Նրա մորթը դեղին էր, գորշ



THE CHILDREN OF THE FUTURE  
WILL BE THE CHILDREN OF THE PRESENT  
WHO ARE THE CHILDREN OF THE PRESENT  
WHO ARE THE CHILDREN OF THE PRESENT

քծերով, գլուխը մեծ, քիթը կուզիկ: Նա կատվի ձագի պես մլավում էր: Նրա աչքերը միայն վեցերորդ ուրբ բացվեցին: Աչքերը կապույտ ելին: Իմ վորդի Տոլյան ուզեց առյուծիկին անվանել «Կապտաչյա», բայց հետո վորոշեցինք «Կինուլի» անվանել:

Յես Կինուլիի համար զամբյուղի մեջ անկողին պատրաստեցի, իսկ լերը տնից դուրս ելի գնում, զամբյուղը կողպեքով փակում ելի և վոչ-վոքի մտքից չեր կարող անցնել թե զամբյուղի մեջ առյուծ է ապրում:

Կինուլին շատ շուտ ընտելացավ ինձ և միշտ լետեիցս վազվզում էր: Յերբ լես կարդում ելի, նա սիրում էր սեղանի վրա նստել: Նստում էր ու նայում գրքիս, իբրև թե ինքն էլ էր կարդում:

Վարպեսգի Կինուլին չտխրի, լես մի շտախանդական



շուն ճարեցի, անունը  
Պերի: Յերբ կինուլին  
առաջին անգամ դրեցի  
Պերիի մոտ, Պերին մորն-  
չաց, իսկ հետո սկսեց  
լիզել Սա նշանակում եր,  
վոր նա կինուլին վոր-  
դեգրեց:


Կինուլին, Պերին և  
Տոլյան սկսեցին միասին  
ապրել: Տոլյան դիշեր-  
ները մանճակալի վրայեր  
քնում, կինուլին բարձ-  
րանում եր բազմոցի  
վրա, իսկ Պերին քնում եր հատակի վրա, Տոլյալի ման-  
ճակալի մոտ:



Առավոտյան Տոլլան ամենից շուտ եր դարձնում և կամացուկ կանչում եր «Կինուլի, արի՛ աչտեղ»։ Կինուլին քաց եր անում աչքերը, ձգձգվում եր և վազում նրա մոտ։

Ամեն որ լիս գնում ելի կենդանարանական այգին աշխատելու, իսկ Տոլլան, Կինուլին և Պերին պատշգամբում նստում ելին ու ցած նստում։ Պարտեզում լերելաները խաղում ելին։ Նրանք հաճախ կանչում ելին «Կինուլի, Տոլլա, լեկեք խաղանք»։ Բայց Պերին մըթմըթում






եր և Կինուլիին բաց չեր  
թողնում:

Յերեկոններն աշխատանքից  
հեռու Կինուլիին առնում ելի  
զբոսանքի: Ամեն կողմից ան-  
ցորդներ ելին հավաքվում և  
գոռում. «Տեսեք, առյուծ ե  
գալիս, առյուծ»: Տրամվայ-  
ները կանգ ելին առնում,  
ձիերը վախենում և փնչաց-  
նում ելին, իսկ Կինուլին  
գնում եր հանդարտ, հաղ-  
թական տեսքով, վոչ վոքի  
վրա չեր նայում: Յերը պետք  
եր փողոցի մյուս կողմն  
անցներ, միլիցիոնները ձեռ-  
քը բարձրացնում եր և լեր-  
թեկու թլունը դադարեցնում,  
իսկ Պերին վազվզում եր Կի-  
նուլիի շուրջը, քթով հըր-  
հըրում, դունչը լիզում:

Կինուլին նույնիսկ ավ-  
տոյով զբոսնեց: Նստած եր  
պատուհանի մոտ և դեպի  
փողոցն եր նայում: Շոֆերն





սկզբում շատ եր վախենում  
նույնիսկ, համենայն դեպս  
վիզը շորով փաթաթեց, իսկ  
հետո ասաց. «Վոր տուն վերա-  
դառնամ, կպատմեմ թե ինչ-  
պիսի ճամբորդ եմ տարել,  
բայց լերևի վոչ-վոք չի հա-  
վատ»:

Կինուլին և Տոլյան շատ  
խաղալիքներ ունեւին. կեզլի,  
շոգեշարժ, խորանարդներ,  
Ֆուտբոլի մեծ գնդակ: Տոլ-  
յան խորանարդներից տուն  
եր շինում, իսկ Կինուլին  
մոտենում, թաթով խփում եր  
և տո, յը փուլ եր գալիս:  
Տոլյան բարկանում, իսկ Կի-  
նուլին ուրախանում եր: Հենց  
վոր գնդակը վերցնում ելի,  
Կինուլին անմիջապես պառ-  
կում եր մեջքի վրա և նայում.  
շուտ կզցեմ գնդակն արդյոք:  
Են բ գնդակը գցում ելի,  
Կինուլին ճանկերը խրում եր  
գնդակի մեջ, մոնչում եր և





գնդակի հետ թախալվում հատակի վրա: Տուլան ել եր  
գնդակը բռնում: Կինուլիի ճանկերը մեծ-մեծ ելին, քայց  
լերը Տուլան նրա հետ խաղում եր, կինուլին իր ճանկերը  
միշտ ներս եր քաշում, վախենում եր, վոր նրան ճանկ-  
առախ:

Ամառն աչապես անցավ, իսկ պշնանը Կինուլին մրսեց  
և հիվանդացավ: Նա ախուր պառկած եր և վոչինչ չեր  
ուտում, շարունակ մրսում եր: Մենք նրա չորս կողմը  
տաք շեր շարեցինք, ելեքորակյան ջեռուկ գրինք: Կինուլին



չէր թողնում վոր մտախցը հեռանամ: Յերը նրան թվում էր թե հեռանում եմ, թաթերը պարզում եր և խղճալի ձաչնով կանչում, «Մն-ա-մա»:

Կենդանաբանական այգուց մի բժիշկ լեկալ: Նա դեղ նշանակեց, բայց Կինուլին չէր ուզում ընդունել: Այն ժամանակ լեա մտի մի բարակ շերտ կտրեցի և զեղը նրա մեջ փաթաթեցի: Կինուլին կարծեց թե լեա իրեն հուրասիրում եմ մտով և դեղը կուլ ավեց: Կինուլին լերկար ժամանակ հիվանդ մնաց — մի ամբողջ ամիս: Մինչև ան-

գամ լրագրերում գրում ելին թե Կինուլին հիվանդ ե։  
Յերբ Կինուլին սկսեց առողջանալ, ծանոթ անձանոթ  
նրան այցելո. թան ելին գալիս։ Նրանք բոլորն ել սի-  
րում ելին տեսնել թե ինչպես ե Կինուլին բան ուտում։  
Կինուլին արդեն մեծացել եր։ Նրա համար ճաշ ելինք լե-  
փում մեծ կաթօսալի մեջ. լերկու կիլո մսից, տեսալ-տեսալ  
բանջարեղենից, սոխից, կորկոտից։

Կինուլին առողջացալ և նորից սկսեց սենյակներում  
վազվըզել, լերեխաների հետ խաղալ։ Յերեխաները մոտե-  
նում ելին մեր դռանը, բանալու անցքից կամացուկ ասում  
ելին. «Կինուլի, արի խաղանք»։ Կինուլին հասկանում եր.  
մոտենում եր դռանը, լետևի թաթերի վրա կանգնում, իսկ  
առջևի թաթով բռնակը քաշում, դուռը բաց եր անում և  
վազում միջանցք։ Բայց միջանցքում արդեն վոշ-վոք  
չեր լինում. լերեխաները թագնվում ելին։ Կինուլին  
փնտրում եր և խոհանոցում, և լողարանում և սեղանի տակ։



Յերբ նրանց գտնում եր, ուրախանում եր, հետո ել ինքն եր թագնովում: Նա միշտ թագնովում եր նեղ միջանցքում, պահարանի լեռուում: Կանգնում եր ու նայում լերեխաներին, իսկ լերեխաները ձևացնում ելին իրրև թե փնտրում են նրան:


Յեթե նրան անմիջապես գտնում ելին, նա վիրավորվում, հեռանում եր և այլևս չեր լսողում: «Կինուլին հով ե տեսել», հարցնում ելին լերեխաները միմյանց: Յեվ շարունակում ելին փնտրել, մինչև վոր Կինուլին ինքը դուրս եր գալիս:

Կինուլին Տուլալի շոգեշարժը շատ եր սիրում:




Բռնում եր, բայց նրանով խաղալ չեր կարողանում, միայն կրծոտում եր ու ջարդում: Տույան բազկաթուռի լետեր թագնվում եր, կինուլին կանչում, ուզում եր շողեշարժը նրանից մի կերպ վերցնել:

Յերեխաների ամենանետաքրքրական խաղը «առուծների վրա վորսի դուրս գնալն եր»: Նրանք հավաքվում ելին միջանցքում և լերկու խմբի բաժանվում: Մի խումբը միջանցքի մի ծայրին եր կանգնում, մյուս խումբը՝ մյուս ծայրին, իսկ մեջտեղում՝ կինուլին: Բոլորը շունչներն իրենց քաշած, սպասում ելին: Հանկարծ լերեխաներից մեկը մի խմբից մյուս խմբի մոտ եր վազում, դա վորսորդն եր: կինուլին թուշում եր նրա վրա և լեթե



1540



A 2413

վոտից բռնում եր, նշանակում եր, վոր նա սպանված է, լեթե գիպչում եր, ուրեմն յիրավորված եր, իսկ լեթե վորսորդին հաջողվում եր կինուլի մոտից վազելով անցնել, ուրեմն կինուլին հաղթված եր: Բայց կինուլին շատ քիչ եր հաղթվում, իսկ լերը մեծացավ, միշտ հաղթում եր:

Մի անգամ լերեխաները մտածեցին կինուլի հետ ուղղմական խաղ խաղալ. հակադրեր հազան և չորեքթաթ սողացին զեպի կինուլին: կինուլին սկզբում չվախեցավ, միայն զարմացավ, իսկ հետո, լերը լերեխաները մտա գնացին, նա այնպես մոռնչաց, վոր Տոլյան հակադրին իսկուլն հանեց և ասաց. «Կինուլի, մենք ենք, ինչո՞ւ վախեցար»: կինուլին Տոլյային տեսավ, ծանոթ ձայնո լսեց և ուրախացավ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԵՎԱՆ  
ՍՏՄԵՆՍԿԻ ԿՈՒԼՏՈՒՐ  
ՍՏՄԵՆՍԿԻ ԿՈՒԼՏՈՒՐ

17



Ապրելի 20-ին Կինուլիի մեկ տարին լրացավ: Բակի և նուշիակ ամբողջ փողոցի յերեսխաները լեկան շնորհավորելու և ընծաներ բերեցին. նոր ֆուտբոլի գնդակ, կեզլի, մեծ արկղ խորանարնդեր: Այդ ուրը Կինուլին նըստած եր բազմոցի վրա և ճաշում եր բոլորի հետ: Նրա համար պատրաստեցինք իր սիրած ճաշը՝ խմորաթելով արգանակ, ձվածեղ և կատյետ: Ճաշի ժամանակ նամակաբերը լեկավ և Կինուլիի համար շնորհավորական նամակներ բերեց: Ծրարի վրա գրված եր. «Կինուլի Չապլինային»: Իսկ նամակները բոլորն ել միատեսակ ելին. «Սիրելի Կինուլի, շնորհավորում ենք քո ծննդյան ուրը: Մենք քեզ շատ ենք սիրում և ուզում ենք տեսնել»:

Մի քանի որից հետո Կինուլիին տարան կենդանաբանական այգին: Յեթե ուզում եք նրա հետ ծանոթանալ՝ գնացեք կենդանաբանական այգին:

Այնտեղ դուք կտեսնեք նրան:

Պատ. խմբակիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբակիր՝ Ան. Գասպարյան  
Սրբադրժ՝ Ա. Արզարանյան



Գլավիտի լիազոր Կ—4618 Հրատ. 4201. Պատ. 32.  
Տիրամ 5000.

Թուղթ 62×94 տղ. 1 1/4 մամ մեկ մամ 23.712 նիշ.  
Հեղինակային 1/4 մամ

---

Հանձնված է արտադրության 20 ադոսա. 1937 թ.

Ստորադրված է ապելու 15 փետրվարի, 1938 թ.

---

Գինը 70 կոպ.


Պետհրատի տպարան, Յերևան Լենինի փող. 65

8719

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0002300



ФБС 70 ЧОН.

248



064.



В. ЧАПЛИНА и А. ГЛАЗОВ  
КИНЧУЛИ  
ГИЗ. АРМ. ССР. ЕРЕВАН

Преп. 1960